. . . . ԿԱՄԱԻՆ ԱՑ. ԿԱՆԿՆԵՑԻ ՁԽԱՁՍ ՓՐԿՈՒԹԵ . . . . . ԱՆՈՒՆ ՍԱՐԿԱԻԱԳ. ՀԱՑՐ ԻՄ ՈՀ-Ս.-ՐՆ . . . ԹԻԻՍ :ՌԾԸ: (1609):

ԳՏԻՁ ԿԱՄ ՏՈՂ ԲԵՐԴ

660. ՏՈՂ ԲԵՐԴԻ կիսավեր եկեղեցու արևելյան կողմում մի գերեզմանաքարի վրա եղել է.

Թվին :ՁՁ: (1257). այս է տապան Մուիէս վարդապետին . . .

Մանոր. *Տեղում չգտանք։*

Հրատ. *Բարխուդարեանց, 84։*

Տող բերդի *կիսավեր եկեղեցու մեջ եղել են սպիտակավուն քարից հինգ փոքր խաչքարեր՝ հիշատակագրություններով.*

661. Խաչս Նազարին.

662. Խաչս Մրհապետին.

663. Խաչս Շահումին.

664. Խաչս Ղազարայ.

665. Խաչս Եղուայ (Եղուայ?)

Մանոր. *Տեղում չգտանք։*

Հրատ. *Բարխուդարեանց 84։*

65. ՑՈՐ ԳՑՈՒՂ

Հիմնված է այն բարձր լեռան ստորոտում, որի գագաթին գտնվում է Ցորաբերդը։ Այս բերդը վերջին դարերում կոչվել է նաև Վելիջանի բերդ, համանուն իշխանի անունով։ Ցորաբերդը Արցախի միջնադարյան հին բերդերից է։ Անձրևների հեղեղումներից հետո բերդի շրջապատում երևում են հին ջրատար խողովակների, մեծ կարասների և խեցեղեն անոթների բեկորներ և տնային իրերի կտորներ։

Բերդատաբի լանջին, դյուղից հարավ մնում են մի փոքր եկեղեցու ավերակները, որի մոտ նաև մի ստորերկրյա դամբարան՝ մեջը անարձանագիր գերեզմանաքար. եկեղեցին կոչվում է ս. Լուսավորչի անապատ։

Դյուղամիջի եկեղեցին շեն է և կոչվում է Ամենափրկիչ. վերջինս չորս սյուների վրա կանգնած թաղածածկ շենք է։

666. ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՑՈՒ արևմտյան մուտքի բարավորի վրա, անարվեստ։ դրչությամբ 1 տող.



Մանոր. *Բարխուդարյանցը այս անորոշ գրվածքը վերծանում է «Հիշատակ է ։Ն։ (951) թվ.»։ Նկատի ունենալով գրչության ոճը և եկեղեցու նորաձև լինելը, մենք ընդունելի չենք համարում նման վերծանում։*

Հրատ. *Բարխուդարեանց, C5։*

667. ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՑՈՒ բեմի ճակատի եզրին, վերից վար 1 տող.

Ր
Ո
Գ
Ի
Ր
Ի
Ֆ

ԳԻՐԻՔՈՐ

Մանոթ. *Տառերի հերթականությունը չի պահպանվել։*

66. ԾԱՄՁՈՐ ԳՅՈՒՂ

668. ԳՅՈՒՂԱՄԻՋԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ հյուսիսային պատին, արտաքուստ 1 տող։

թվ|ին|. :ՌՃԿԶ:-ին (1717):

Մանոթ. *Բարխուդարյանցն ունի շինության թվական :ՌՃԵԵ: (1696)։*

Հրատ. Բարխուդարեանց, 63։

67. ՍՊԻՏԱԿ ԽԱՉ ՎԱՆՔ

Վանք և Հադրութ գյուղերի արանքում, բարձրադիր մի հարթության վրա, գտնվում է Սպիտակ խաչ վանքը։ Այն ունի մի հասարակ եկեղեցի, որի արևմուտքում կա փոքր և բաց գավիթ։ Արևելյան պատին կից՝ թաղածածկ սենյակ-հյուրատուն. ընդարձակ բակում՝ խաչքարեր և տապանաքարեր։

Գոյության ունեցող շենքերը բոլորն էլ XVII դարի կառուցումներ են, բայց դրանց պատերի մեջ ագուցված հին տապանաքարերի ու խաչքարերի վրա եղած տապանագրությունները հասնում են մինչև XIV դարի առաջին կեսը, նույնը նաև բակում գտնվածների վրա. նախկինում եկեղեցու մեջ գտնված մասունքների հետ կապված ավանդությունները ավելի հին են։

669. ԽԱՉՔԱՐ, որմնավակ, դեղաքանդակ, գտնվում է բակի հարավային մասում, ճակտոնի տակի կիսակամար քարի վրա 6 տող.

ԵՍԱՁԱՄԻՈՐԴԻԻՇԽԱՆԱՅԿԱՆԿ
ՆԵՑԻԶԽԱՉՍԻ:ԻՓԿՈՒԹԻ ՀՈԳ
ՈՅՈՐԴՈՅԻՄՈՅԱՍՈՒԴԱՐԱՅՈՐ
ՓԿԱՐԴԷՔՅԻՇԵՑԷՔԻՍՈՒՐԲՅՂ
ԱԻԹՍԶԵՐ ԱՂԱՋԵՄ:ԻԹՎ
ԻՍ:Զ:Ղ:Ե:

ԵՍ
ՀԱ
ՍԱ
Ն.Ո

ԵՍ ԱՁԱՄԻ, ՈՐԴԻ ԻՇԽԱՆԱՅ, ԿԱՆԿ|-
ՆԵՑԻ ՁԽԱՁՍ[Ի] Ի ՓՐԿՈՒԹԻ ՀՈԳ|ՈՅ
ՈՐԴՈՅ ԻՄՈՅ ԱՍՈՒԴԱՐԱՅ. ՈՐ|Ք
ԿԱՐԴԷՔ ՅԻՇԵՑԷՔ Ի ՍՈՒՐԲ ՅԼԱՂ|-
ԱԻԹՍ ՁԵՐ ԱՂԱՁԵՄ: Ի ԹՎ|ԻՍ :ՁՂԵ:
(1346):

Մանոթ. *Խաչքարն ընդգրկող երեք որմերի սրբատաշ քարերը պոկել-տարել են, նույնը և ճակտոնինը։ Խաչի հորիզոնական թևերի տակ քանդակված են հրեշտակներ։*

Ջալալյանցն առաջին տողը կարդացել է «Արաասի որդի իշխանա», իսկ Բարխուդարյանցը անձնանունները դրել է փոքրատառով և թվականը՝ :ՁՂԷ: Հուշարձանը անվանել է «Բեմ»։

Հրատ. Ջալալեանց, II, 264։ Բարխուդարեանց, 67։